**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**

**ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

Էլ.փոստ nalbandyan.armavir@mta.gov.am

04 մարտի 2016թ թիվ 37

4 պորոտա 2 շենք

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝*

*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

Մեծարգո պարոն մարզպետ,

Ձեզ է ներկայացվում Նալբանդյան համայնքի ղեկավարի 2016 թվականի փետրվար ամսվա որոշումներն ու կարգադրությունները:

Առդիր՝ որոշումներ – 2 էջ,

կարգադրություններ – չկան

**Նալբանդյան համայնքի ղեկավար՝ Գ. Մկրտչյան**

*Կատ. ՝Ի. Պետրոսյանը*

*Հ. Ավետիսյանը*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնք, 4-րդ պող., 2-րդ շենք

էլ. փոստ nalbandyan.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,01, փետրվարի .2016 N 5

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ Օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի ,, Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին,, N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի ապրիլի 26-ի ,, Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին,, թիվ 3 որոշումը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Նալբանդյան համայնքի բնակիչ Ալինա Հովհաննեսի Հովհաննիսյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 035-010/, 0.110 հա՝ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղական համայնքի 1-ին թաղ, 18-րդ փողոց, 32-րդ տնամերձ:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

# ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնք, 4-րդ պող., 2-րդ շենք

էլ. փոստ nalbandyan.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 10» փետրվարի 2016 թվական N6

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ- ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունել համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 10-ի N1 հերթական նիստի N 4-Ն որոշումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համայնքային ենթակայության, բնակավայրային նշանակության 0.02121 հա հողատարածքը /ծածկագիր 04-070-0080-0013/ օտարել աճուրդ-վաճառքով: Աճուրդ-վաճառքի 1քմ հողատարածքի մեկնարկային գին սահմանել 528 դրամ, 1 քայլի չափը՝ 5%:
2. Աճուրդ-վաճառքը իրականացնել 2016 թվականի մարտի 18-ին, ժամը 11.00-ին՝ գյուղապետարանի շենքում:
3. ,,Հայաստանի Հանրապետություն,, օրաթերթում աճուրդ-վաճառքի վերաբերյալ տալ հայտարարություն:
4. Հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի մարտի 15-ի ժամը 18.00:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ